Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

6. Աջակցել Եվրոպական չափանիշների ներդրմանը բարձրագույն կրթության ասպարեզում, ներմուծել համատեղ ծրագրեր
7. Ներմուծել հարատև ուսումնառություն (Life Long Learning)
8. խթանել բուհ-ուսանող փոխազդեցություն
9. նպաստել ԵԲԿՏ գրավչությանը
10. ընդունել դոկտորական ծրագիրը (ասպիրանտուրան) որպես Բոլոնիայի 3-րդ աստիճան, ներդաշնակել ԵԲԿՏ և ԵՀՏ:

Արդեն իսկ սկսվել և ուժեղ թափով առաջ է ընթանում այս գործընթացը: Հայաստանի մի շարք բուհեր որդեգրել են բարեփոխումների ուղիները, և նրանցից յուրաքանչյուրն աշխատում է որքան հնարավոր է օպտիմալ կերպով իրականացնել Բոլոնիայի հռչակագրում ամրագրված կետերը:

Սակայն, շատ հաճախ մտավախություն է առաջ գալիս հայ մասնագետների մոտ, թե, արդյոք ընդունելով և կիրառելով եվրոպական չափանիշներով առաջ ընթացող գործընթացի պայմանները, մենք չե՞նք վտանգում մեր ազգային դպրոցի որդեգրած և արդեն ավանդույթ դարձած կրթական արժեքները: Եվ ավելացնելով, որ եվրոպականացնելով կրթությունը, մենք կկորցնենք մեր ազգային յուրահատուկ ինքնությունը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել մի շատ կարևոր փաստ, որ Բոլոնիայի գործընթացը փորձում է հավասարակշռություն և փոխհամաձայնեցում գտնել բազմազանության և միանմանության միջև, այսինքն զարգանալ, պահպանելով ազգային լավը, ստեղծել համընդհանուրին համապատասխանող կրթական համակարգ:

Լուսինե Ղարախանյան
ԱրՊՀ

Հոգեբանական ստերեոտիպ
(հետազոտության փորձ)

«Ստերեոտիպ» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Ուոլտեր Լիպմանը իր «Հասարակական կարծիք» գրքում: «Ստերեոտիպ» հասկացության բացահայտման գործում մեծ դեր են ունեցել Գ. Օլպորտը, Է. Արոնսոնը, Ռ. Բրաունը, Քեթելը, Այզենկը, Ուզնաձեն և այլն: Ժամանակակից հոգեբանական գրականության մեջ «ստերեոտիպ» հասկացությունն ունի տարաբնույթ սահմանումներ:

Ստերեոտիպերը ստեղծվում են ձևավորված դիրքորոշումների հիման վրա, ասիմիլացիայի երկարատև գործընթացի ամրապնդման արդյունքում, և անձի սուբյեկտիվ կամ օբյեկտիվ գնահատականը այս կամ այն երևույթի նկատմամբ դետերմինավորվում է մշակված դիրքորոշումներով:

Այս կամ այն երևույթը գնահատել ստերեոտիպի դիտակետից, նշանակում է իրականության նկատմամբ ունենալ ոչ խորքային և իռացիոնալ մոտեցում: Պետք է ասել, որ հոգեբանները տարակարծիք են ստերեոտիպերի իռացիոնալության մասին տեսակետներում: Իռացիոնալության բնորոշումն արդարացվում է ստերեոտիպի վարքային դրսևորումներում ատրիբուցիայի /վերագրման/ մեխանիզմի հաճախակի դրսևորմամբ:

Բոլորիս հայտնի ֆիզիկական գրավչության ստերեոտիպը, հաճածայն որի բոլոր գրավիչ արտաքինով մարդիկ օժտված են ցանկալի հատկանիշներով, վկայում են ստերեոտիպի իռացիոնալության մասին:

«Ստերեոտիպը» դիտվում է որպես մարդկանց ու երևույթների վերաբերյալ կանխակալ կարծիք, որը հետևանք է կոնկրետ երևույթի ոչ թե անմիջական գնահատականի հիմնված թարմ տպավորությունների և վերլուծությունների վրա, այլ ստացված է ստանդարտացված դատողություններից ու սպասելիքներից:

Ստերեոտիպը ենթադրում է վարքային մոդելների ակամա, կրավորական «ընտրություն», որն կանխակալ է, հետևապես ոչ իրատեսական: Գ. Օլպորտի անձի տեսության դիսպոզիցիոնալ ուղղվածության հիմքում ընկած ընդհանուր գաղափարները ենթադրում են տարբեր իրադրություններում մարդու ընկալման նախատրամադրվածության պայմանավորվածությունը: «Մարդն իր արարքներում, մտքերում և հույզերում ցուցաբերում է որոշակի կայունություն, անկախ ժամանակի ընթացքից, իրադրություններից ու կենսափորձից»: Հենց այս կայունությունն է, որ նպաստում է վարքային կարծրատիպի ձևավորմանը: Մարդն ըստ Գ. Օլպորտի հակված է կանխակարծության ու նախապաշարմունքների սևեռմանը, որը պայմանավորված է նրա կենսական փորձի ընդհանրացման, կոնցեպտուալիզացման ու կատեգորիզացման նորմալ, բնական ձգտումներով: Այստեղ, անշուշտ, զուգորդվում են մարդու անմիջական փորձն ու իռացիոնալ տպավորությունները: Այսպիսի պատկերացումներում, Օլպորտի

կարծիքով, բացակայում է ճշմարտության կորիզը, և դրանք կարող են հիմնվել սոսկ ասեկոսեների, հույզերի և ֆանտազիաների վրա:

Ուսումնասիրությունները պարզել են, որ ստերեոտիպը, մասնավորապես էթնիկական ստերեոտիպը ժամանակի ընթացքում կարող է փոփոխության ենթարկվել տարբեր արտաքին ու ներքին գործոնների ազդեցության տակ: Այսպես, «սևամորթների մասին բացասական նկարագիրը ժամանակի ընթացքում դարձավ առավել չափավոր»:

Էթնիկական ստերեոտիպերի փոփոխությունների վրա ակնհայտ են քաղաքական, սոցիալ-տնտեսական ու հասարակական փոփոխությունները: Փորձենք հիշել ու համեմատել ինչպիսին էր ֆաշիստական Գերմանիան մեր ընկալումներում ԽՍՀՄ տարիներին և ինչպիսին է այն այսօր: Առհասարակ, մեր պատկերացումները խեղաթյուրված էին ոչ միայն գերմանացիների, այլև ամերիկացիների նկատմամբ, և արտասահմանում /ԽՍՀՄ տարածքից դուրս/ ապրող մեր հայրենակիցներին ընկալում էինք ոչ դրական դիտակետից, ընդհուպ մինչև խուսափողական տրամադրվածություն: Ասենք, մարդկանց կենսագրականների վերջում անպայման շեշտվում էր այսօր արդեն ծիծաղ հարուցող հետևյալ արտահայտությունը. «արտասահմանում բարեկամներ չունեմ»:

Մեր օրերում տրադիցիաների և ինովացիաների փոխազդեցությամբ ևս մի շարք էթնիկական և սոցիալական ստերեոտիպեր փոփոխություններ են կրել /ամուսնաընտանեկան փոխհարաբերությունների, թաղման և հարսանյաց ծիսակարգերի կազմակերպման և այլ/: Սոցիալական ստերեոտիպերի էական փոփոխություններ են գրանցվել դարաբաղյան ընտանիքներում: Հիմք ընդունելով գյուղական վայրերում կատարած մեր դաշտային հետազոտությունները, կարող ենք խոսել այդ փոփոխությունների մասին վերլուծելով այն հոգեբանական տեսանկյունից:

Լիսիցյանի «Армяне Нагорного Карабаха» գրքում ընթերցում ենք. «միայն աղջիկ երեխա ծնող կինը ընտանիքում պատվի չէր արժանանում»[4]: Այսօր Ղարաբաղի հայերի շրջանում այդ ստերեոտիպը զգալի փոփոխությունների է ենթարկվել և չի գործում այնպիսի հուզականությամբ, ինչպիսին անցյալում էր: Վերակառուցումն իր հետ բերեց կրոնական համոզմունքների ընտրության ազատության ինովացիան, որով ջախջախվեց ինտերնացիոնալիզմի աթեիստական

քարոզչությունը և ստերեոտիպիզացվեց խղճի ազատության իրավունքը:

Ստերեոտիպերի և էթնիկական ինքնագիտակցության կտրուկ փոփոխության վառ օրինակ է առաջին աշխարհամարտից հետո օսմանյան կայսրության տապալումն ու քեմալականության հիմնավորումը Թուրքիայում /Մուստաֆա Քեմալի նախաձեռնությամբ/: «Կայսերական ժողովուրդն երբեք իրեն չիդենտիֆիկացրեց ազգային հատկանիշներով, այլ միայն կրոնականով: Ժողովուրդը, որի համար իսլամի պատկանելությունը համարվում էր կարևորագույն ինքնաբնութագիր, հանգիստ տարավ խալիֆաթի ոչնչացումը և մի շարք տարաբնույթ կրոնական արգելքներ»: Ի վերջո, որ խիստ կարևոր է, քաշեց իրենից ֆեսկան, որը նրա համար ծառայում էր որպես թուրքի արժանապատվության սիմվոլ և հագավ եվրոպական գլխաշորգլխարկը:

Ստերեոտիպ հասկացությունը պետք է դիտարկել դիրքորոշում, նախապաշարմունք, կանխակարծություն հասկացությունների հարաբերակցման հետ: Առօրյա կյանքում գործած սխալները հաճախ են բննարկման ու շտկման առարկա դառնում, իսկ ահա նախապաշարմունքները սովորաբար հուզական հակազդումների բնույթ են կրում:

Ստերեոտիպերն իրենց յուրահատուկ դրսևորումներն են ունենում միջէթնիկական հարաբերություններում: «Էթնիկական ստերեոտիպ» հասկացությունն հենց ձևավորվում է ազգերի փոխադարձ ընկալումներում հանդես գալով որպես կայուն դիրքորոշում այս կամ այն էթնոսի կամ էթնիկական հանրույթի նկատմամբ: Էթնիկական ստերեոտիպերը էթնոսների հոգեբանական գործունեության արդյունք են և իրենց մեջ ամփոփում են տվյալ էթնոսի կուտակած փորձը, էթնիկական բնավորության և ինքնագիտակցության առանձնահատկությունները և իրավամբ կազմում են նրա մշակույթի անբաժանելի մասը:

Ստերեոտիպերը դրսևորվում են ինչպես սոցիալական, այնպես էլ միջէթնիկական շփումներում ու մշակութային տրանսմիսսիաներում /տարածահաղորդում/: Ըստ որում յուրաքանչյուր էթնոս /Գ. Մ. Անդրեեվա, Ի. Կոն, Գ. Օլպորտ, Ա. Նալչաջյան/ ստերեոտիպացված պատկերացում ունի ինչպես իր /ավտոստերեոտիպեր/, այնպես էլ այլ

էթնոսների /հետերոստերոտիպեր/ հոգեբանական առանձնահատկությունների մասին:

«Ստերեոտիպերում, իհարկե, կան որոշ օբյեկտիվ ինֆորմացիաներ էթնոսի մասին, սակայն դրանք սովորաբար աղճատված են»: Էթնիկական ստերեոտիպերն արտահայտում են էթնոսի դրդապատճառները, արժեքային կողմնորոշումներն ու գաղափարախոսությունը, ինչպես նաև բովանդակում բնավորության գծեր: Սակայն պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ստերեոտիպերը օբյեկտիվ ինֆորմացիա են պարունակում տվյալ էթնոսի բնավորության մասին: Եթ XX-XI դարերում ռուսական էթնոսի վարքի հիմնական ստերեոտիպը համարվում էր «քաղքենիական էգոիզմը», ապա էգոիզմը համարվում էր այդ էթնոսի գլխավոր հատկանիշներից մեկը /Ա. Սալչաջյան/: Դրական հոգեբանական դիրքորոշում ձևավորվում է այն երկու էթնոսների միջև, որոնք դաշնակցային, բարեկամական հարաբերություններ ունեն իրար նկատմամբ:

Բացասական հոգեբանական դիրքորոշում երկու էթնոսների միջև ձևավորվում է, երբ նրանց փոխհարաբերություններում առկա են մրցակցության, տիրապետման ու թշնամանքի երևույթները: Այլ է իրավիճակը այն երկու էթնոսների միջև, երբ նրանց հարաբերություններում երկար ժամանակ իշխել են պատերազմներն ու կոնֆլիկտները:

Եթե էթնոսների այսպիսի հարաբերություններին հաջորդում են համերաշխության ու համագործակցության փոխհարաբերությունները, այնուամենայնիվ ձևավորված կարծրատիպերը ենթագիտակցորեն գործում են հաղորդելով շինծու և արհեստական երանգներ: Ուսումնասիրելով Ղարաբաղի հայեր և ադրբեջանցիներ միջէթնիկական հարաբերությունները, գալիս ենք այն համոզման, որ արտաքուստ հորիզոնական թվացող հարաբերություններն ուղղահայաց էին, որի հիմքում էթնիկական ստերեոտիպերի կանխակարծության, նախապաշարմունքների ու սուբյեկտիվ տրամադրվածության երևույթներն էին:

Արտաքին հանգամանքների ազդեցության ներքո հոգեբանական ստերեոտիպերը սքողվեցին հայ-ադրբեջանական հարաբերություններում լայն տարածում գտած քիրվայութական հարաբերությունների /ադրբեջանցիների ու Ղարաբաղի հայերի բարեկամությունը/ ժամանակ: Քիրվայությունը միջէթնիկական կոնֆլիկտների սրացումներից խուսափելու ժողովրդական դիվանագիտությունից ծնված

հոգեբանական պաշտպանական մեխանիզմների վրա հիմնված երևույթ է: Քիրվայության երևույթը ևս չէր կարող շրջանցել երկու կողմերի/ Ղարաբաղցի հայեր - ադրբեջանցիներ/ էթնիկական ստերեոտիպերը և քիրվայության ամենաջերմ դրսևորումների ժամանակ էլ դրսևորվում էր այն զգոնությունը, ինչը խիստ հեռու էր փոխադարձ հարաբերությունների հարմոնիայից: Թե հայ և թե թուրք քիրվաները խիստ զգայուն էին սեփական հոգեբանական տարածքի պահպանման հարցում: «Հայը գյավուր է» /անհավատ/, ուստի խարանակիր. «հայի հացը հարամ է» ստերեոտիպը թուրք քիրվայի ենթագիտակցականում «խարանի էֆեկտ» էր, ինչն անխուսափելի էր դարձնում խտրական դիրքորոշման կայունությունը: Քիրվայական փոխադարձ շփումներում և ընկալումներում «ինքնահրականացնող մարգարեության» /Ռ. Մերտոն/ մեխանիզմն արտամղվում էր: «Եթե Ա անձնավորությունն Բ-ի մասին ունի ստերեոտիպի վրա հիմնված որոշակի կարծիք, ապա ամենայն հավանականությամբ Բ-ի հետ հաղորդակցվելիս Ա-ն իրեն կպահի այնպես, որ կմղի Բ-ին այնպիսի վարք հանդես բերել, որը կհամապատասխանի իր հանդեպ Ա-ի ունեցած ստերեոտիպին»[7]

Թուրք և հայ քիրվաներն իրար մասի ունեին ստերեոտիպերի վրա հիմնված կարծիքներ, սակայն քիրվայության ժամանակ սքողված էր ստերեոտիպերից բխող վարքային դրսևորումները:

Արմեն Բաղդասարյան

Սոցիալ- տնտեսական վիճակը ԼՂՀ-ում

Ուղիղ 12 տարի է անցել հանրապետությունում հրադադարի հաստատումից հետո: Պատերազմական գործողությունների հետևանքով հիմնավեր կործանվել են գործարանները, արտադրական կոմբինատները, քայքայման եզրին են կանգնել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, ունեցել ենք հազարավոր մարդկային սոցիալ կորուստներ և անմեղ զոհեր:

Այսօր, մի հետադարձ հայացք ձգելով դեպի անցյալը, ընկնում ես անկումային տրամադրությունների գիրկը և միայն բարոյական ինքնահսկողության ընդունակություն պետք է ունենալ, նաև՝ հավատ լավագույն ապագայի նկատմամբ, որպեսզի հաղթահարվեն բոլոր ապրումները: Եվ ժողովուրդը մեր, հաղթահարելով հետպատերազմյան բոլոր դժվարությունները, ձեռնամուխ եղավ նոր կյանքի արարմանը, ինչպես ասում են՝ ջնջեց ամեն ինչ և նորից սկսեց ու հաղթեց, քանզի

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ